ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Դժբախտ պատահար է համարվում արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ), չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների վուգադիպումը, որոնց դեպքում Ձեր կամքից անկախ վնաս է հասցվում Ձեր կյանքին կամ առողջությանը:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 62 շ., 93-93/1
Հեռ.՝(+374 60) 50 57 57
Կայք՝ www.regoinsurance.am

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից 24.07.2012թ.-ին հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններում՝այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

Դժբախտ պատահարի հետևանքով՝

- Աշխատունակության ժամանակավոր կորուստ,
- Հաշմանդամության I, II, III կարգ,
- Մահ:

ՈՐՏԵՂ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ և ԼՂՀ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերակնքվում է վարկի գործողության ողջ ժամկետում՝ բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

Կարգավորվում է Ձեր վարկային պայմանագրով և/կամ հրապարակային օֆերտայով սահմանված պայմաններով:

ՈՐՔԱՆ Է ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Յուրաքանչյուր դեպքի գծով 20,000 ՀՀ դրամ:

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում անհրաժեշտ է կանգահարել (+374 60) 50 57 57 հեռախոսահամարով,
- Կատարել ապահովագրական ընկերության ցուցումները,
- Համաձայն ցուցումների հնարավոր է անհրաժեշտություն առաջանա ներգրավել Ոստիկանություն, ԱԻՆ կամ այլ իրավասու մարմինների:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերության գրասենյակում լրացնել հայտային դիմումը կամ լրացված դիմումի լուսապատճենը/լուսանկարն ուղարկել claims@reso.am էլ. հասցեին,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությունը և համապատասխան իրավասու մարմինները չեն տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,
- Ապահովագրական հայտի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները ժամանակին չեն ներկայացվել, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի հայտանիշեր ունեցող իրադարձության բնույթի և պատճառների հաստատման համար կամ նախապես ներկայացվել են կեղծ ապացույցներ,
- Ապահովագրված անձի ալկոհոլային, թմրամիջոցների կամ թունավոր նյութերի միջոցով արբեցած վիճակում գտնվելիս,
- Ապահովագրված անձի կողմից ինքնասպանության փորձ կամ ինքնասպանություն կատարելիս, ինչպես նաև իրեն այլ կանխամտածված ֆիզիկական վնասվածքներ հասցնելիս, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրված անձը հարկադրված է կատարել այդ գործողությունները երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով,
- Ապահովագրված անձի կողմից հակաօրինական գործողություններ կատարելիս,
- Ապահովագրված անձի կողմից փոխադրամիջոցի, մեխանիկական սարքի, ապարատի, գործիքի կամ այլ սարքավորման շահագործման դեպքում՝ համապատասխան թույլտվության կամ իրավունքի բացակայության պայմաններում: Ինչպես նաև թվարկված միջոցների կառավարումն ապահովագրված անձի կողմից այնպիսի անձի փոխանցելիս, ով չունի տվյալ միջոցը վարելու համապատասխան թույլտվություն կամ իրավունք կամ ով գտնվում է թմրամիջոցների, ալկոհոլային կամ թունավոր նյութերի ազդեցության տակ,
- Ապահովագրված անձի դիտավորության արդյունքում,
- Առանց բժշկի նշանակման այնպիսի դեղորայքի, թերապևտիկ կամ վիրաբուժական մեթոդների օգտագործման դեպքում, որոնք ապահովագրված անձը կիրառում է անձամբ կամ դրա՝ իր հանդեպ կիրառումը հանձնարարում է այլ անձի,
- Ապահովագրված անձի՝ թռչող ապարատով թռիչքի դեպքում, եթե նա այն կառավարել է ինքնուրույն, առանց համապատասխան թույլտվության,
- Ապահովագրված անձի՝ սպորտային միջոցառումների, մարզումների, մրցումների մասնակցության հետևանքով,
- Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ազդեցության հետևանքով,
- Ռազմական գործողությունների կամ այլ ռազմական միջոցառումների, քաղաքացիական պատերազմների, ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների, գործադուլների, պետական իշխանությունների և կառավարման մարմինների կողմից հայտարարված արտակարգ և ռազմական իրավիճակի հետևանքով, ինչպես նաև ապահովագրված անձի զինվորական ծառայության, զինվորական հավաքների ու զորավարժանքների մասնակցության ժամանակ,
- «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից 24.07.2012թ.-ին հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: